ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
23.12.2014 Թ. N «ԲԸՀԱՇՁԲ-14/22»
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 12 մայիսի 2015 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետև՝ Հիմնարկ), ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ալգարե» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գարեգինյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ նաև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների կատարման 23.12.2014 թ. կողմերի միջև կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/22 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի կատարման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի օգոստոսի 20-ը՝ Պայմանագրի 1.3 կետի *«մայիսի 28»* արտահայտության փոխարեն կարդալով *«օգոստոսի 20»* արտահայտությամբ:

1.2 Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկը փոխարինել Համաձայնագրի թիվ 1 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի բաղկացուցիչ մասն է կազմում օրացուցային գրաֆիկը սահմանող թիվ 1 հավելվածը՝ կազմված 2 էջից:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ | «ԱԼԳԱՐԵ» ՍՊԸ |
| ք.Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | Ք. Գյումրի,Չայկովսկի 8/2 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Առեքսիմբանկ Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011474393, ՀՎՀՀ 02553861 | Հ/Հ 2380019212830100 |
| | ՀՎՀՀ 05521865 |
| Տնօրեն Հ. Սարգսյան | Տնօրեն Ա. Գարեգինյան |

*Հավելված թիվ 1*

*23 դեկտեմբերի 2014 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ԲՇՀԱԶԲ-14/22 գնման պայմանագրի*
*2015 թ. մայիսի 12-ի թիվ 1 համաձայնագրի*

# ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների կատարման

| Հ/հ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Ծավալը (հազար ՀՀ դրամ) | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|---|
| | | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հիմքեր, միաձույլ ե/բ շրջանակներ, հիմնային հեծաններ | 23409.373 | 09.04.2015 | 18.06.2015 |
| 2 | Ծածկի իրականացման աշխատանքներ ծածկի սալ 0.00, 3.72 6.80 նիշով | 26662.583 | 13.04.2015 | 05.06.2015 |
| 3 | Աստիճան 1, թեքուղի 1 թեքուղի 2 բարձակային պատշգամբ | 11306.527 | 16.05.2015 | 07.08.2015 |
| 4 | Ե/բ հեծանների, պատերի, բացվածքների իրականացում և ուժեղացում | 36445.322 | 10.04.2015 | 10.07.2015 |
| 5 | Միջնորմների իրականացում | 4520.359 | 22.05.2015 | 28.06.2015 |
| 6 | Վերելակի հորան | 21235.960 | 22.04.2015 | 07.08.2015 |
| 7 | Տանիք , ե/բ գոտի | 17485.998 | 15.05.2015 | 25.07.2015 |
| 8 | Նկուղ (քանդման ու վերականգման աշխատանքներ, հատակներ, դռներ լուսամուտներ) | 31872.398 | 08.04.2015 | 20.07.2015 |
| 9 | Առաջին հարկ (քանդման և վերականգման աշխատանքներ, հատակներ, դռներ լուսամուտներ) | 33327.264 | 10.04.2015 | 10.08.2015 |
| 10 | Երկրորդ հարկ (քանդման ու վերականգման աշխատանքներ, հատակներ, դռներ լուսամուտներ) | 34685.828 | 14.04.2015 | 14.08.2015 |
| 11 | Դռների ու լուսամուտների ապամոնտաժում | 975.236 | 20.04.2015 | 15.06.2015 |
| 12 | Արտաքին աշխատանքներ | 6662.846 | 22.05.2015 | 15.08.2015 |
| 13 | Ջրամատակարարում և կոյուղի | 2098.592 | 25.05.2015 | 15.08.2015 |
| 14 | Ջեռուցում և օդափոխություն | 16810.537 | 12.06.2015 | 18.08.2015 |
| 15 | Էլեկտրոմոնտաժային աշխատանքներ | 19342.229 | 20.05.2015 | 20.08.2015 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16 | Արտաքին բարեկարգում | 12958.948 | 01.07.2015 | 15.08.2015 |
| | Ընդամենը | 299800.000 | 08.04.2015 | 20.08.2015 |

Պատվիրատու
ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011474393, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան ________ (ստորագրություն)

Կապալառու
«ԱԼԳԱՐԵ» ՍՊԸ
Ք. Գյումրի,Չայկովսկի 8/2
«Առեքսիմբանկ Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
Հ/Հ 2380019212830100
ՀՎՀՀ 05521865

Տնօրեն Ա. Գաբրիելյան ________ (ստորագրություն)